ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 404

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «09» 2019 թ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, մի կողմից, և «Սոս Սարգսյան» մշակութային հիմնադրամը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ն. Սարգսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել 2019 թվականին սեպտեմբերի 26-27-ը կայանալիք «Սոս Սարգսյանի 90-ամյակին ընդառաջ» ծրագրի կազմակերպման և անցկացման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (հավելված N1) և մասնակի ծախսերի նախահաշվի (հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թ. սեպտեմբերի 16-ի N 658-Ա/2 հրամանի՝ հինք ընդունելով «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով իրականացվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Թատերարվեստի ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ» անվանակարգի մրցութային հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 15-ի նիստի արձանագրությունը՝ հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Արվեստների ծրագրի» «Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման «Թատերական ստեղծագործական ծրագրեր և նախագծեր» տողով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին:

2.1.2. Պայմանագրի 2.3.7-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, քննարկել և Կատարողին ներկայացնել նախահաշվում փոփոխություն կատարելու կամ նոր ծախսային ուղղության ամրագրում կատարելու կամ դրանց կատարումը մերժելու մասին իր եզրակացությունը:

2.1.3. Պայմանագրի 6.1-ին կետում սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունը, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. *Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով ծրագրի, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի և Պայմանագրի պարտադիր պահանջները:

2.3.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկույթ աշխատանքների կատարման ընթացքի մասին:

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթեր, ինչպես նաև Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը՝ կցելով էլեկտրոնային կրիչներ՝ ասուլիսների և մամուլի հրապարակումների մասին, լուսանկար, ազդագիր, հրավիրատոմս և այլ տեղեկատվական նյութեր:

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 1.0 (մեկ) տոկոսի չափով:

2.3.5. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ միջոցառման համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամփոփ տեղեկույթ՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով:

2.3.7. Պայմանագրի գործողության ընթացքում, մինչև փաստացի ծախսերի իրականացումը, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված գումարի 10 տոկոսը գերազանցող ծախսային ուղղությունների գումարների փոփոխությունների կամ նոր ծախսային ուղղության ամրագրման անհրաժեշտություն

առաջանալու դեպքում (չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը), այդ մասին գրավոր առաջարկություն ներկայացնել Պատվիրատուին:

2.3.8. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4. *Կատարողը իրավունք ունի՝*

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 889.2 հազար (ութ հարյուր ութսունինը հազար երկու հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն հավելված N 2-ի:

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 90 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում, իսկ 10%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

3.3. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է իր բանկային հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3.4. Համաձայն «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

4.2. Մինչև Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումը Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարմանն ուղղված՝ իր կողմից փաստացի կատարված ծախսերի վերջնահաշվարկը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից

յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով:

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1.-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը:

5.4. Պայմանագրի 1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 /հինգ հարյուրերորդական/ %-ի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում վերջինս Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 /հինգ հարյուրերորդական/ տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2019 թ. սեպտեմբերի 28-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2019 թվականի նոյեմբերի 15-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թ. նոյեմբերի 25-ը:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Պայմանագիրը կազմված է 10 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Սոս Սարգսյան» մշակութային հիմնադրամ
Ք. Երևան, Ամիրյան 26
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930045062940100
ՀՎՀՀ 02613668
Հեռ.՝ 091/099 549690
Տնօրեն՝

_____ Ն. Սարգսյան

Կ. Տ.

Հավելված N1
23 09 2019 թ.
N 404 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Սոս Սարգսյանի 90-ամյակին ընդառաջ»

1	Կազմակերպության անվանում	«Սոս Սարգսյան» մշակութային հիմնադրամ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Ամիրյան փողոց, թիվ 26
3	Ծրագրի անվանում	«Սոս Սարգսյանի 90-ամյակին ընդառաջ»
3.1	Բովանդակություն	Այս տարի լրանում է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի 90-ամյակը: Հաշվի առնելով մեծանուն արտիստի, ազգասեր հայի վաստակը մեր մշակույթի զարգացման գործում՝ իր անունն կրող հիմնադրամը նախատեսում է արտիստի ծննդավայրում անցկացնել երկօրյա փառատոն, որում մասնակցություն կցուցաբերեն Ստեփանավան քաղաքի մշակույթի տան և արվեստի դպրոցի սաները, ինչպես նաև թատերական, նկարչական և ասմունքի բաժնում սովորող պատանիները: • Նկարչական բաժնի մասնակից սաներին կտրվի առաջադրանք-թեմա՝ ներկայացնել Սոս Սարգսյանի խաղացանկի կերպարներից որևէ մի հերոսին նվիրված աշխատանք՝ ըստ իրենց ընտրությամբ: Աշխատանքների ցուցադրումը կիրականացվի փառատոնի առաջին օրը՝ Ստեփանավանի քաղաքային հրապարակում տեղակայված Սոս Սարգսյանի արձանի շուրջ՝ բացօթյա: Փառատոնի առաջին օրը կանցկացվի նաև ասմունքի եզրափակիչ փուլը (I փուլը անցկացվել է նախապես, սույն թվականի մայիս ամսին), որը նույնպես տեղի կունանա Սոս Սարգսյանի արձանի շուրջ: Մասնագիտական հանձնաժողովների կողմից ընտրված լավագույն աշխատանքների սաներին և լավագույն ասմունքողներին կհանձնվեն հուշանվերներ և Սոս Սարգսյանի գրչին պատկանող որևէ գիրք, որը կտրամադրվի Հիմնադրամի կողմից: • Փառատոնի երկրորդ օրը մշակույթի տան դահլիճում նախատեսվում է անցկացնել գրական կոնֆերանս, որի թեման կլինի Սոս Սարգսյանի «Լակոտը» գիրքը:

		Ելույթներով հանդես կգան երկու բանախոս, ներկայացնելով Վարպետի գրական ժառանգությունը: Այնուհետև հանդիսատեսի դատին կհանձնվի մինչ այսօր անծանոթ «Կոմիտաս» վավերագրական-գեղարվեստական ֆիլմից դրվագներ, որում գլխավոր դերակատարը հենց ինքն է՝ Սոս Սարգսյանը: Կոնֆերանսի ավարտին Համազգային թատրոնը կներկայացնի «Լոռեցի Սաքոն» ներկայացումը: Փառատոնի ավարտին մասնակիցները կժամանեն Երևան:
3.2	Նպատակ	Ծրագրի իրականացման նպատակը թատրոնի և կինոյի հայ անվանի դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի անցած ուղու և ստեղծած արժեքների վերաիմաստավորումն է, նրա ստեղծագործությունների հանրահռչակումը, հանրության լայն շերտերին արվեստագետի ստեղծագործական գործունեության ներկայացումը: Առաջնահերթ է անդրադարձ կատարել արտիստի գրական գործունեությանն ու մեր մշակույթում նրա ունեցած վաստակին, վառ պահել հայկական կինոյում և թատրոնում բազմաթիվ փայլուն դերեր մարմնավորած արտիստի հիշատակը, արժևորել հայ մեծագույն դերասան Սոս Սարգսյանի գործունեությունը և հանրահռչակել Վարպետի ստեղծագործական ժառանգությունը:
3.3	Անցկացման ժամկետ	26.09.2019-27.09.2019
3.4	Անցկացման վայր	Ստեփանավան քաղաք
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ակնկալվում է, որ փառատոնի անցկացմամբ հանրության շրջանում ևս մեկ անգամ կարժևորվի և կհանրահռչակվի մեծանուն արտիստի կերպարը, նրա անցած ստեղծագործական երկարատև և բեղմնավոր ուղին: Հանդիսատեսը կհաղորդակցվի հայ մեծագույն դերասաններից մեկի՝ Սոս Սարգսյանի արվեստին, իսկ տոնական մթնոլորտում իրականացվող թատերական ներկայացումը կնպաստի արվեստագետի միջոցառման պատշաճ իրականացմանը:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Փառատոնի ընթացքում նկարչական բաժնից նախատեսվում է մոտ 25, իսկ ասմունքի եզրափակիչ փուլում՝ մոտ 20 սաների մասնակցություն, ներկա կգտնվեն 5 մանկավարժ: Փառատոնը կանցկացվի Ստեփանավանի քաղաքային հրապարակում տեղակայված Սոս Սարգսյանի արձանի շուրջ, բացօթյա: Մշակույթի տան դահլիճում նախատեսվող գրական կոնֆերանսում ելույթներով հանդես կգան երկու բանախոս՝ հինգ տասնյակից ավելի մարդկանց կներկայացվեն Վարպետի

		գրական ժառանգությունը և գործունեությունը: Կոնֆերանսի ավարտին Համազգային թատրոնը մոտ 500 հանդիսատեսի դատին կհանձնի «Լոռեցի Սաքոն» ներկայացումը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Սոս Սարգսյան» մշակութային հիմնադրամ
Ք. Երևան, Ամիրյան 26
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930045062940100
ՀՎՀՀ 02613668
Հեռ.՝ 091/099 549690
Տնօրեն՝

_____ Ն. Սարգսյան

Կ. Տ.

Հավելված N2
23 09 2019 թ.
N 404 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Սոս Սարգսյանի 90-ամյակին ընդառաջ» ծրագրի կազմակերպման և անցկացման *մասնակի* ծախսերի

(2019 թ. սեպտեմբերի 26-27-ը)

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Գումարը (հազ. դրամ)
1.	**Գովազդային նյութերի պատրաստում և տպագրություն՝** - հրավիրատոմս՝ 25 հատ x 280 դրամ = 7.0 հազ. դրամ - ազդագիր /A3/՝ 3 հատ x 1000 դրամ = 3.0 հազ. դրամ - ծրագիր՝ 10 հատ x 1000 դրամ = 10.0 հազ. դրամ - գովազդային և տպագրական նյութերի ձևավորում՝ 10.0 հազ. դրամ	**30.0**
2.	**Վարձակալության ծախսեր՝** - դահլիճի վարձակալություն /2 օրվա համար/՝ 120.0 հազ. դրամ - ձայնային տեխնիկայի վարձակալություն /2 օրվա համար/՝ 100.0 հազ. դրամ (բարձրախոսներ,ուժեղացուցիչներ,վահանակ)	**220.0**
3.	**Կազմակերպիչների գործուղման ծախսեր՝** - օրապահիկ՝ 3 մարդ x 3000 դրամ x 2 օր = 18.0 հազ. դրամ - գիշերավարձ՝ 3 մարդ x 8000 դրամ x 1 օր =24.0 հազ. դրամ - ճանապարհածախս՝ 3 մարդ x 3000 դրամ =9.0 հազ. դրամ	**51.0**
4.	**Կազմակերպական և ստեղծագործական խմբի վարձատրություն** (ներառյալ հարկերը)՝ - ծրագրի ղեկավար՝ 90.0 հազ. դրամ - ծրագրի հեղինակ և համակարգող՝ 80.0 հազ. դրամ - ծրագրի կազմակերպիչ՝ 70.0 հազ. դրամ - ֆինանսական հարցերով գործավար՝ 50.0 հազ. դրամ - մանկավարժներ՝ 150.0 հազ. դրամ, *որից*՝ ասմունքի՝ 60.0 հազ. դրամ նկարչական՝ 40.0 հազ. դրամ	**440.0**

	թատերական՝ 50.0 հազ. դրամ	
	Ընդամենը	
5.	**ԱԱՀ**	**741.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**148.2**
		889.2

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Սոս Սարգսյան» մշակութային հիմնադրամ
Ք. Երևան, Ամիրյան 26
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930045062940100
ՀՎՀՀ 02613668
Հեռ.՝ 091/099 549690
Տնօրեն՝

_____ Ն. Սարգսյան

Կ. Տ.